ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/435/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 30 հոկտեմբերի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի, 2025 թվականի հոկտեմբերի 30-ին քննելով Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու անդամ Սևակ Գևորգի Եղիազարյանի ընտանիքի անդամ Անի Դերենիկի Մելքոնյանի կողմից պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2021 թվականի պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ գույքի և եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/435/2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում,

«Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ պաշտոնատար անձանց 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու՝ ընտանիքի անդամների հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու անդամ Սևակ Գևորգի Եղիազարյանի ընտանիքի անդամ Անի Դերենիկի Մելքոնյանի Հայտարարագիրը Հանձնաժողով չի ներկայացվել:

1.2 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի օգոստոսի 15-ին թիվ 01/3240/394-2025 գրությամբ Անի Մելքոնյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և Հանձնաժողով ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Անի Մելքոնյանին ծանուցվել է նաև, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 10:15-ին ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն: Նշված ծանուցումը Անի Մելքոնյանի կողմից ստացվել է 2025 թվականի օգոստոսի 28-ին (հիմք APC0129205419AM փոստային առաքանին): Սակայն ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, համապատասխան հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 2025 թվականի սեպտեմբերի 30-ին պատշաճ ծանուցված Անի Մելքոնյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 433/25 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ տեղեկացված Անի Մելքոնյանի բացակայությամբ 2025 թվականի հոկտեմբերի 30-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Անի Մելքոնյանի կողմից պարզաբումներ չեն ներկայացվել:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/435/2025 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ.

3.1 Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու անդամ Սևակ Գևորգի Եղիազարյանը պաշտոնատար անձի 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներ տվյալները» ենթաբաժնում Անի Դերենիկի Մելքոնյանին հայտարարագրել է, որպես համատեղ բնակվող չափահաս անձ:

3.2 Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու անդամ Սևակ Գևորգի Եղիազարյանի ընտանիքի անդամ Անի Դերենիկի Մելքոնյանի կողմից Օրենքով նախատեսված Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.3 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օրվա դրությամբ Հայտարարագիրը ներկայացվել է Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի ավագանու անդամ Սևակ Գևորգի Եղիազարյանի ընտանիքի անդամ Անի Դերենիկի Մելքոնյանը Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է պաշտոնատար անձանց պաշտոնեական պարտականությունները ստանձնելու՝ ընտանիքի անդամների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 36-րդ հոդվածով կանոնակարգված են հայտարարագրեր ներկայացնելու ժամկետները (ստանձնման հայտարարագրի պարագայում՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում):

4.3 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.10 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովը արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը անպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորություն կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, հայտարարատու

պաշտոնատար անձի և նրա ընտանիքի անդամի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Տվյալ դեպքում Անի Դերենիկի Մելքոնյանի կողմից մինչև գործի քննության օրը Հայտարարագիր ներկայացնելու արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անի Դերենիկի Մելքոնյանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/435/2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անի Դերենիկի Մելքոնյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**